

ՔԱՂԱՔԸ ԵՎ ԳՅՈՒՂԸ

Շուրի: Դեռ մինչև ոռոգական տիրապետությանը լեռնային Ղարարաղում միայն մի բնակավայր էր վերածվել քաղաք-ամրոցի՝ Շուշին: Բայց այն հատուկ աիպի քաղաք էր: Միաժամանակ հարավային ծայրում սկսեց զարդանալ Հաղրութ (Վանք) շտարակայանը, որտեղ արդեն առաջացել էին բավական ընդարձակ առևտրական ու արհեստավորական կրպակաշարքեր, որոնք սպասարկում էին ոչ միայն այստեղ բնակավորված ղորամասերին, այլ նաև Դիզակի ամրոցը խտարնակ շրջանին՝ Սակայն հեղափոխության նախօրեին Հաղրութ ոչ թե քաղաքային բնակավայր, այլ ավելի շուտ մեծ գյուղ էր, որի բնակիչների ղլխավոր ղազմունքն այդե-գործությանն ու հացամշակությանն էր: Շուշին բնակիչների համար մինչև այժմ էլ, ինչպես հիմնադրման ժամանակ, մնում է բերդ՝ զալա, իսկ շուշեցիներն էլ իրենց կոչում են ոչ այլ կերպ, քան ղԵՐԵՑ՝ բերդի բնակիչներ: Ռուսական իշխանությանը լեռնային Ղարարաղում հաստատվելիս այս բնակավայրն օգտագործել է ամենից առաջ որպես ստրաանդիական կետ և այն վերածել շտարակայանի: Սակայն շտարակայանը խանքենդ գյուղ (ներկայումս՝ Սափանակերտ՝ Շուշուց ներքե) տեղափոխելու պաճառով, որտեղ կլիմայական պայմաններն ավելի բարենպաստ էին, Շուշու հեռավոր ղարդացումը պայմանավորվել է այլ հանդամանքներով:

Որոշ ղարարաղցի ծերունիներ, ոչ առանց հիմքի վկայակոչելով իրենց հայրերին, պնդում են, թե սարավանդի վրա, որտեղ ջիվանշիրցի Փանահ-խանը բերդակառուցներ է հիմնել, արդեն մինչև այդ գոյություն ունեւ բնակավայր՝ արհեստանոցներով և առևտրական կրպակներով: Սյդ բնակավայրի համար տնտեսական բաղա էր ծառայել մերձկասպյան ցածրավայրերից Ղարարաղի ալպիական

արոտավայրերը շարժվելիս անասնապահների գրխավոր ուղու վրա դառնվելը, այն վայրում, ուր վերարձրացող անասնապահներն առանց որեւէ դժվարության, տեղափոխությունների վրա շատ ժամանակ չծախսելով, կարող էին անասնապահական մթերքները՝ պանիրը, կարաղը, բուրդը, կաշին փոխանակել իրենց պետքական արհեստավորական արտադրանքով (օրորոցներ, սնդուկներ, բահեր, փափախներ, սանգերներ, սանրեր, տեղական շաւեր, պայտեր, դամեր և մետաղե այլ մանրուք, երբեմն բերովի շաքար և համեմունքներ), նորոգել իրենց սայլերը, թամբերը և այլն²: Շուշու այդ տնտեսական նշանակությունը պահպանվում է այսօր էլ՝ աղղամիջյան ընդհարումների ժամանակ քաղաքի հրկիզումից հետո, շնայած վտրչական կենտրոնը Սափանակերտ տեղափոխելուն: Այսպեղի կրպակներում ու արհեստանոցներում այսօր էլ տեղի է ունենում մանուֆակտուրայի ու մշակված իրերի և վաչկատունների տրնտեսական արտադրության մթերքների ապրանքափոխանակություն: Կյանքն այժմյան Շուշիում մարում է, հենց որ վաչկատուններն իրենց հոտերով սարերից իջնում են ձմեռային տափաստանային արոտավայրերը:

Շուշիով է անցնում Ղարարաղի լեռնաշղթան հատող Շամախի—Թավրիզ ամենակարճ ճանապարհը: Այդ ուղու մեջտեղը՝ Քաշալսարի (Լիսոդոր)

² Թարթառ ու Խաչեն գետերի վերնահոսանքների տրոտավայրերը բարձրացող անասնապահների համար մինչև վերջերս այգպիսի կետ էր ծառայում Գանձասար լեռան ստորոտում՝ Խաչենի ճանապարհին գանվող Դանք գյուղը: Այստեղ ամռանը, վաչկատուններին սպասարկելու համար, ճանապարհի երկու կողմում առևտրական երպակներ ու արհեստանոցներ էր բացվում: Առաջ այգ կեղը գտնվում էր ավելի ցած՝ Վաճառք (Բաղարքենգ՝ անունն էլ ստացել է այստեղից) գյուղի մոտ, որտեղ Հասան-Ջալալյանների օրոք առևտրական քաղաք է եղել:

¹ Տե՛ս И. Давидбеков, Гадрут, СМОМПК, պր.VI:

ամենահարմար լեռնանցի մոտ ամրացված աթոռանիստ-կենտրոն, հյուսիսում՝ մինչև Կուրի, հարավում՝ Արաքսի գետանցները հասնող սահմաններ ունեցող Ղարարտղի խտնության առաջացումը XVIII դ. կեսին, նշանակում էր Շամախու և Թավրիզի միջև առևտրական կարավանների շարժման անվտանգություն տպահովում։ Շամախին Ռուսաստանից բերվող ապրանքների ելակետ էր, իսկ Թավրիզը՝ պարսկական, եվրոպական (Տրապիզոնով, Էրզրումով, Նրեանով ու Նախիջևանով եկող) և, վերջապես՝ Պարսկական ժոցի նավահանգիստներով թափանցած հնդկական ապրանքների հիմնական պահեստ։ Այստեղ Փոստոս-խտնի հաստատություն հետ մեկտեղ Շուշի՝ «Ղալ» գերագասցին վերաբնակվել Ագուլիսի ընկերները, որոնք Թավրիզի հետ կապված էին առևտրական շտհերով, հիմնել էին իրենց թաղը, որը մինչև վերջերս հենց այդպես էլ կոչվում էր՝ «Ագուլեցոց»։ Ղարարտղի մարդի նկարագրությունը՝ ում (1823 թ.) այս թաղն անվանված է «Ագլիսի»։ Նույն աղբյուրում հիշատակվում են նաև Ղաղանշալու թաղը (նեղակիս Նախիջևանի հանրապետությունում՝ Ալինջի-չայ գետի սկիզբների մոտ գտնվող Ղաղանջի գյուղից վերաբնակեցվածներ), որոնք պղնձե (ղաղան) ամանեղենի պատրաստման (որից էլ գյուղն ստացել է անունը) հմուտ վտրպետներ էին, ըայց գրա հետ մեկտեղ, նաև Արաքսի Զուլֆայի անցման՝ ու ստորին կուրյան շրջանների միջև ապրանքներ (հատկապես՝ Նախիջևանի քարաղ, որը գերադասում էին անասնապահները) տեղափոխող համարձակ վաճառականներ։ Ագուլիսցիներն ու Ղաղանջիցիները՝ Շուշի բերքին թե իրենց արհեստավորական հրմսությունները, թե՛ առևտրական փոխը, ակտիվորեն մասնակցելով տեղական ապրանքափոխանակությանն ու տարանցիկ առևտրին։

Ընկարագրությունը՝ ում նշվում է նաև Թավրիզին՝ որպես Շուշու թաղերից երրորդը՝ բացառապես մահմեդականներով բնակեցված թաղ, որի անունը ցույց է տալիս ինչպես բնակիչների ծագումը, այնպես էլ սերտ կապը Թավրիզի հետ³։

³ Այս անցումի մոտ էր գտնվում 1603 թ. Շահ-Արասի ավերած հայկական հարուստ Զուլա քաղաքը, որի բնակիչները ղաղթեցվեցին Սպահան, որանը՝ գետի սյուս ափին, ասանձին քաղաք հիմնեցին՝ Նոր Զուլան, որը շարունակեց պահպանել առևտրական հին կապերը Հնդկաստանի, Պարսկաստանի և ավազանգիստների և եվրոպական շուկաների հետ։

⁴ Այս թաղերից յուրաքանչյուրը հայրենակցական ընկերությունով համախմբված էր իր եկեղեցու շուրջը և, ըստ ամենայնի, մինչև ուսական քաղաքային կարգի հաստատումը կոսովարվում էր իր թաղային կազմակերպությանը։ Հարկ է նշել, որ XIX դ. սկզբին նրանք կորցրել էին իրենց հարազատ բարբառները և խոսում էին տեղական բարբառով։

⁵ Հետադադում հանգեց եկավ նաև շորորդ՝ Մեղրեցոց

Մեհտի-Ղուլի խանի փախուստից և խանի տիրապետության վերացումից հետո, Շուշին ուսական տիրապետության օրոք վերածվեց ընդարձակ գավառի կենտրոնի՝ համապատասխան վարչական, գաղական և այլ հիմնարկություններով։ Այստեղ տեղափոխվեց և հայկական թեմի կենտրոնական վարչությունը։ Դրա հետ մեկտեղ, քսանական թվականներին արևելյան Անգրկովկասում գեո ալնքան մեծ էր քաղաքի տնտեսական նշանակությունը. որ Կովկասի հեթանոսների, մահմեդականների, հրեաների մեջ քրիստոնեություն, իսկ քրիստոնյաների մեջ՝ աստվածաշունչ տարածելու, Պետերբուրգում միջնորդությամբ թույլտվություն ստացած «Բալեկի ավետարանական ընկերության» անգամներն իրենց գործունեության կենտրոն բնորոշին հենց Շուշին, որտեղ 1823 թ. ձեռնամուխ եղան տպարանի և գաղոցի ջենքի շինարարությանը։ Վերջինս, 1827 թ. բացելուց հետո, ընդունվեցին 130 սովորող՝ համարյա բոլորն էլ ոչ ունեղ հայկական ընտանիքների ղավակներ։ Տպարանում գրքերը տրվում էին ոչ թե հին հայ գրական լեզվով, այլ նոր՝ կենդանի խոսվածքների վրա հիմնված, ուստի և հանրամատչելի, նոր ձևավորվող լեզվով։ Քանի որ քաղաքից շուրջ 10 կմ հեռավորության վրա սահմանափակվում, այլ նաև նկատի ունեն բողոքական ուսմունքի արմատավորում, և այն էլ ոչ միայն մահմեդականների, հրեաների ու հեթանոսների, այլ ամենից առաջ հայերի մեջ, ապա այն հարուցեց հայ հոգևորականության թշնամանքը և Կովկասի բարձրագույն իշխանության օժանդակությունը վայելող էջմիածնի կաթողիկոսի համառ միջնորդությամբ միևնույնների կոմիտեն արգելեց Անգրկովկասում Բագելի քաղաքից ինչպես մանկավարժական գործունեությունը, այնպես էլ գրքերի տպագրությունը (1831)⁶։ Առկն հարցի նկատմամբ Կովկասի իշխանությունների բռնած դիրքը պայմանավորված էր նրա այն հայեցակետով, թե Կովկասում քրիստոնեության արմատավորումն ու քրիստոնեական մեկ գավառներից մյուսին անցնելու պետք է ուղղափառ հոգևորականության մեծանշանորդ լինի։ Քարոզիչները պետք է թողնեին Շուշին, ըայց նրանց սկսած գաղոցական գործն այստեղ կառավարական ղավառական ուսումնարան, իսկ 1838 թ. հայկական

թաղն իր հայրենակցական եկեղեցիով։ Արանք ղաղթել էին Մեղրուց, որն Արաքսի աջ վտակ Դիզակի հովտի անցման արանցիկ առևտրական ուղու ճյուղավորությունում գտնվող առևտրական կետ էր։ Մեղրեցիները ղաղթել էին 1822 թ. հետո։

⁶ Տե՛ս «Акты Кавказской археологической комиссии» (այսուհետև՝ АКАК), т. VII, № 16, 1878, էջ 308։

⁷ Ասկայն նրանց քաղաքությունն անհեա լմանց՝ Շուշում և Շամախում բողոքական համայնքներ առաջացան։

Քննական դպրոց՝ առաջին և միակ լրիվ միջնակարգ ուսումնական հաստատությունը հիմնելու խթան հանդիսացավ։ Վերջինս իր տեսակի մեջ միակն էր Լեոնային Ղաթաբաղում մինչև 1881 թ., երբ բացվեց ոսկական ուսումնարանը։ XIX դ. երկրորդ կեսին հանդես եկան կանանց ոչ լրիվ միջնակարգ դպրոցներ՝ մեկը հայ հոգևորականությունից (1864 թ.), մյուսը՝ կառավարական, Ալապիսով, Շուշին վերածվում էր Անգրկովկասի հայերի նաև մշակութային նշանակալից կենտրոնի¹⁰։ 1828 թ. Թուրքմենչայի պայմանագրով Երևանի ու Նախիջևանի խանությունները Ռուսաստանին միավորելուց շատ շանցած, պարսկական սահմանը փակվեց տարանցիկ առևտրի համար։ Դա մեծ հարված էր Շուշու առևտրին, բայց այն շուտով կարողացավ կարգի ընկնել, ընդլայնելով միջնորդի իր դերը ուսական ֆաբրիկաների ու անդական դյուղատնտեսական արտադրության միջև, որի շնորհիվ Շուշին չհասավ առևտրական ջրջտնտեսության այն ծայրահեղ սահմանափակմանը, որին շատ արագ՝ մեկ ատսնամյակի ընթացքում, հասան Երևանն ու Նախիջևանը։ Վերջիններում, արդեն անցյալ դարի երեսնական թվականների վերջերին, ճանապարհորդները դառարկ և խաբուլված գտան ընդարձակ իջևանատներն ու պահեստները, որոնք մինչև ուսական տիրապետությունը գրսից բերված ազդանքներ էին մատակարարում կենսորոնական ու արևելյան Անգրկովկասին։

1837 թ. վերամիավորված մարդերը պտշտոնական դործերով այցելած Նեֆեդևեր զգոհում է, որ ուսական արդյունարերությունը չի հետաքրքրվում նոր շուկայով։

Բուրոսովին այլ էր Լեոնային Ղարարաղում։ 1833 թ. գույքամայան կաղմողները հարկ են համարում նշել, որ Շուշու ընկերներին շատերն առևտրով են զբաղված։ Հենց միայն կարմիր ազրանքի առևտրականները 94-ն էին, զեղերինն ու ներկերինն՝ 30-ը։ Այնժամ, երբ Երևանն ու Նախիջևանն ավելի ու ավելի էին վերածվում իրենց բարեկեցությունը այգեդործության ու խաղողագործության վրա խարսխած և անհետացող արհեստավորական արտադրություն ու աննշան առևտրական

գործառնություններ ունեցող մեծ գյուղերի, Շուշում արհեստներն ու առևտրը շարունակում էին մնալ եկամտի միակ աղբյուրը։ Նրա բնակիչները գրեթե չունեին այգիներ ու վարելահողեր։ 1823 թ. յոթ հազարից քաղաքի բնակչությունը աճել ու 1914 թ. հասել էր 25 հազարի¹⁰։ Այն Անգրկովկասյան Հայաստանում բացարձակապես գյուղատնտեսական դաղմունքներից կտրված դուռ քաղաքային տիպի միակ բնակավայրն էր։

Շուշիում մեծ թվով կառավարական հիմնարկների ու դպրոցների կենտրոնացումը նոր խթան դարձավ առևտրի և արդյունաբերության դարգացմանը։ Մոսկվայի, Բաքվի և այլ կենտրոնների գործարտային պահեստներում ապառիկի մեծ իրավունք ունեցող Շուշու վաճառականները, առանց բանկային բորսայական գործիչների հետ ազդակցական և այլ կապերի օժանդակությամբ, իրենց քաղաքում մեծածախ ու մանրածախ ընդարձակ առևտուր ծավալեցին, կազմ հաստատելով ոչ միայն Շուշու և Ջիվանշիրի, այլ նաև Զանգեզուրի և Նույնիսկ Երզնկայի գավառների մանր մասնավոր առևտրական կետերի ցանցի հետ։ Հենց Շուշիում կենտրոնացան անդական հումքի զնման և ուսական գործարանների ու ֆաբրիկաների առաջման գլխավոր գործակալությունները։

Մայրաքաղաքի և տրդյունաբերական կենտրոնների հետ կապը պահպանվում էր նաև յուրահատուկ պայմանների բերումով։ Շուշին իր առողջ, լեոնային կլիմայի շնորհիվ դարձել էր առանձին քաղաքներում ոչ շատ վաղ մշտական բնակություն հաստատած և փոքր-ինչ կարողություն եա ղցած բոլոր զարարաղցիների ամառանոցը։ Այդ արտագաղթածների մեջ, որոնք հայրենի երկրամասի հետ էին կապում մանկության հուշերն ու զեոեա թարմ ընտանեկան ավանդույթները, պահպանվում էր անհաղթահարելի ուժով դեպի հարաղաա լեոնաշխարհը ձող տեղական ուրույն գավառական հայրենասիրությունը։ Նյութապես շատ թե քիչ ապահովված զարարաղցիների մեծ մասն իր պարաքն էր համարում գյուղում, իսկ ավելի հաճախ՝ Շուշիում կառուցել հարմարավեա, որոշ դեպքերում՝

¹⁰ Շուշիում նրանք ապրում էին «Լեմցի գարա», այդինքն՝ Երևանական ձորա արվարձանում, իրենց աղթատան մոտ։
⁸ Լեո, Պատմություն Ղարարաղի հայոց թեմական գրպրոցի, էջ 82—97։

⁹ Н. Нефедьев, Взгляд на Армянскую область. СПб. 1839, էջ 50 և հաղորդները։ Միայն 80-ական թվականներից սկսած՝ արտասահմանյան բամբակի մաքոր բարձրացնելուց հետո, ուսական ֆաբրիկան սկսեց օժանդակել բամբակի գանքատարածությունների ընդարձակմանը Արարատյան դաշտում։ Նույն ժամանակ էլ տեղում առաջացան կոնյակի և պահածոների գործարանները։

¹⁰ Հստ Մոգիլսկու և Երմոլով II-ի՝ 1592 ընտանիք, Հստ նրանց «նկարապրության» (հ. III, էջ 308), 1833 թ. կար 5079 շուշարական սեոի, տյսինքն՝ երկու սեոերի 10 հազար բնակիչ։ Երևանում մինչև 1886 թ. գրեթե բուրոսովին չի նկատվում բնակչության աճ (1828 թ.՝ 11.430, 1886 թ.՝ 14.420 շուշ), շնայած որ այն վերածվել էր ընդարձակ նահանգի վարչական կենտրոնի։ Միայն 1886 թ. հետո, կապված բամբակի, կոնյակի և պահածոների արտադրման զարգացման հետ, բնակչությունը սկսեց աճել և 1914 թ. հասավ 29.766 շուշի։ Նույնը և Նախիջևանում, որտեղ 1828 թ. կար 5470 մարդ, իսկ 1914 թ. հասավ 10.246-ի։

րավական մեծ այդի ունեցող, լավ կահավորված առանձնատներ, որպեսզի ամռանը, ընտանյոք հանդերձ, կարողանային «ամառանոց» դնալ:

Անդրկովկասյան երկաթուղու Բաքվի տեղտմասի անցկացման և Եվլախ կայարանից մինչև Շուշի խճուղի դեցելու շնորհիվ ավելի ուժեղացավ հովեկների այցելությունը Շուշի, ամառային ամիսներին աշխուժացնելով քաղաքը, նույնիսկ ամրոգջ Ղարաբաղը: Շուշի—Եվլախ փոստային ուղեմասն ուժեղ թափով նախապատրաստվում էր այդ «հավաքին», մեծացնելով փոխադրամիջոցների քանակը: Թարթառից, Ելիզավետպոլից, նույնիսկ Բաքվից այստեղ էին տեղափոխվում ռազմաթիվ մասնավոր ձիարետնասայլեր ու ձիակառքեր: Շուշիում կյանքն ստացել էր զանգվածային ղվարճության դրոշմը, բուռն ալիքով ծավալվելով ժողովրդին՝ ռուս, հասարակական այդում, ժայռերի ու քաղաքի վրա կախված ուղղարբձ քարափների վրա և Պեխ-Աղպուրի (Քարին-տակ՝ Դաշալթիի մոտի աղբյուրները) ու Քաշալսարի աղբյուրների ղրոսախնջույքների, Սարիրեկի սրբավայր ուխտագնացության, մոտակա գյուղեր հեծյալ գրոսանքների և այլ խմբական միջոցառումների ձևով տարածվելով հեռավոր արվարձաններ: Գրոսնոդ ու ղվարճացող հանգստացողների այդ ամրոգջ ղանգվածը տեղում մեծացնում էր մթերքների ու մանուֆակտուրայի պահանջարկը: Ղարաբաղցիների ամառային «հավաքը» Շուշիում և շրջակայքում տեղի տնտեսության վրա կենարարորեն ազդող ռավական խոշոր դրամական միջոցներ էր թողնում, որոնք էլ, ի միջի այլոց, նեցուկ էին լինում տեղական կյանքի հուղող հարցերի նկատմամբ արտադաղթածների մեջ հետաքրքրություն պահելուն, որը պահպանվում էր նաև մշտական ընակավայրեր վերադառնալուց հետո¹¹:

Կենցաղային նոր մրցման առումով լեոնային Ղարաբաղում ռավական մեծ էր եկվոր հովեկների աղդեցությունը երկրամասի մշակութային նկարագրի վրա: Իհարկե, երկհարկանի, երբեմն նաև՝ և ոահարկ քաղաքատիպ տները, հովեկների ղգեստները, նրանց միջավայրում տղամարդկանց և կանանց անկաշկանդ փոխհարաբերությունները, երգն ու նվադը, ինչպես նաև՝ ղեղարվեստական ճաշակն ու ղվարճալի ժամանցները չէին կարող չհեղափոխել ոչ միայն «բերդի», այլ նաև շրջակա մոտիկ գյուղերի արտաքին կեցվածքն ու կենցաղը, և, ան-

տարակույս, օժանդակեցին տեղում ռազմաթիվ հրնավանդ սովորույթների և ավանդութային հավաալիքների անհետանալուն: Մյուս կողմից, ուսյալ առանձնապես համալսարանական երիտասարդության մեծ հավաքը նոր դադաիարների ներհուրով թարմացնում էր տեղի մտավորականությանը: Հովեկներն ամառային ամիսներին Շուշուն տալիս էին մեծ քաղաքի աեսը, որը շունեին Հարավային Անդրկովկասի առավել մարդաշատ քաղաքները՝ Երևանը, Ալեքսանդրապոլը (Լենինական):

Գյուղը և աւտագնացությունը: Ընդհանուր առմամբ, գյուղի կենցաղի վրա աշգում էր ոչ այնքան Շուշու, որքան լեոնային Ղարաբաղից դուրս գտնըվող քաղաքների, առաջին հերթին՝ Բաքվի և Գրոգնու քաղաքային կյանքը: Այդ աղդեցության տարածողները մեծ քաղաքներ վաստակի մեկնած գուղական աշխատավոր տարրերն էին, որոնց տեղաշարժերն ունեին բոլորովին այլ բնույթ, քան հովեկների խմբերի տեղաշարժերը: Վերջիններիս տունը, ընտանեկան օջախը դուրս էր լեոնային Ղարաբաղի սահմաններից, իսկ նրանց քաղաքային տպավորությունները բուրժուական միջավայրի արդյունք էին, ի աարբերություն արտագնացների, որոնք ղեո կապված էին տեղի անտեսական ու հասարակական կյանքին, իսկ նրանց քաղաքային տպավորությունները արդյունք էին դործարանային բնակչության աշխատավոր խավերի հետ ունեցած շփման: Մի շարք պատճառներ դարարաղցի գյուղացուն ստիպում էին շատ թե քիչ երկար ժամանակով հեռանալ գյուղից: Այդ պատճառներից առաջինը կարելի է համարել սակավահողությունը, որը, հողի ուժասպառության պայմաններում, պարարտացման և ոռոգման միջոցներն ավելացնելու համար մեծ կապիտալ ներգրումներ էր պահանջում: Այդ անրարենպաստ պայմաններն ավելի խիստ էին արտահայտված լեոնային Ղարաբաղի հարավային մասում, որի բնակչությունը շատ քիչ տարիներ ստիպված չէր լինում ղիմելու կողմնակի վաստակի: Արտագնացության հավանարար շատ հին ծագում ունեցող ձևերից մեկը գյուղի աշխատավորների մեկնումն էր դաշտային Ղարաբաղ և Մուղանի աափասաան հերկի և բերքահավաքի ժամանակ, քանի որ մինչև ոռոսական իշխանության հաստատվելը այդ ցածրույթների երկրադործական աշխատանքների մեծ մասը կատարում էին լեոնցիները, բնդ որում, բարձրագրի վայրերում դարնան ուշ դալը նրանց վաղուց ի վեր հնարավորություն էր տվել մինչև իրենց մոտ երկրագործական աշխատանքների սկսվելը վաստակի մեկնելու ցածրագրի վայրեր¹²: Ռուսական տիրապետություն-

¹¹ Հովեկների այցելությունը Շուշի այժմ կրճատվել է: Այդ գերն ղգալաեսն անցել է վարական նոր կենտրոն Ստեփանակերտին, որն ունի ամառանոցավայրի, նույնիսկ ձմեռային առողջարանի վերածվելու նպասավոր պայմաններ: Թարվա բոլոր եղանակներին աչքի է ընկնում հիանալի րարեխաղը կլիմայով և ղերծ է Եղջին շատ հաճախ պարունող թախձր մշուից:

¹² Այդ աշխատանքների համար բնամթերքով վճարելու ղափերը կայուն կերպով սահմանված էին սովորույթով և մինչև վերջերս պահպանվում էին:

ներ, արագացնելով ապահաստանի բնակիչների անասնապահությունն և երկրագործության անցնելու պրոցեսը, նպաստեց վարելահողերի ասարածքի մեծացմանը ցածրույթներում, դրանով իսկ մեծացնելով աշխատավոր ձեռքերի պահանջը: Վերը նկարագրված պայմաններում սեզոնային-ժամկետային դաշտային աշխատանքի համար լեռնային դարարադցիների սուսփաստան իջնելը մշակական բրնձի կրող երեւոյթի էր վերածվել: Սույն վիճակն տոտվել հրամայական պահանջ մնաց ոռոգման ցանցի ընդարձակմանը ղուգրնթաց, որով մեծ տարածություն հատկացվեց ինտենսիվ մշակութայիններին:

Հայերի և ադրբեջանցիների այդ հարաբերություններն, իհարկե, նաեւ մշակութային փոխներգործություն էին առաջացնում, խթան հանդիսանալով հայ տղամարդկանց ադրբեջաներեն իմանալուն և արեւելյան երգ-երաժշտության նկատմամբ ունեցած հակմանը:

Վճռական վերափոխիչ գերը, սակայն, հատկապես վերջին ժամանակներում, պատկանում էր մեծ քաղաքներում աշխատութեան մեջ դաշնակց և քաղաքային պրոլետարիատի կյանքի հետ անմիջականորեն շփվող ու ֆարքիկադործարանային բանվորների միջավայրում շատ թե քիչ երկար ժամանակ մնացող արտադնացիներին: Արտադնացութեւնը նոր պայմաններում վերսկսվեց միայն խորհրդային իշխանութեան հաստատումից և մանավանդ Անգրկովկասյան Ֆեդերացիայի կազմավորումից հետո, որը երկրամասը միավորեց որպես մեկ տնտեսամշակութային ամբողջութեւն: Այսպես, 1924 թ. ամռան վերջին Սոս, Գյումրի-Ճարաար, Ննդի ու այլ գյուղերում առկա էր Բաքու և այլ քաղաքներ մեկնելու արտոնագրերի խիստ պահանջ: Սպասվում էր, որ, օրինակ, Ննդիում, որտեղ այդ տարի բերքը խիստ վատ էր, ձմռանը բոլոր տղամարդիկ կբացակայեն: Մեկնում էին ոչ թե անհասներ, այլ ամբողջ խմբեր, քանի որ սովորաբար ամեն գյուղ մի կարգի բանվոր էր մասնակարարում և անդում էլ հեջտ էր լինում աշխատանք դաշնել ու համախումր բնակաանդում ապրելը¹³:

Քաղաքներում մնալը միջոտ չէ, որ տեւում էր մեկ ձմեռ՝ մինչև դաշտային աշխատանքների նոր սեզոնը: Նրանք, ովքեր աշխատանքի էին տեղավորվում ոչ թե դործարաններում, ֆարքիկաներում կամ շինարարութեւնում, այլ հիմնարկներում, դրասենյակներում, խանութներում կամ դաշնում էին մասնավոր ծառայութեան մեջ և ապահովված էին լինում լավ տեղով, երկար մնալով ու աստիճանաբար բնակաանալով նոր կյանքի պայմաններ:

¹³ Հաղորդն ու Թաղարը տալիս էին որմնադիրներ, նորաշենր՝ ձուլողներ, Տումին ու Մուխրեններ՝ հյուսներ և և այլն:

րին, հաճախ ձգտում էին լրիվ հիմնավորվել այնտեղ, և եթե վերադառնում էլ էին, ապա միայն ամուսնանալու կամ էլ հարազատներին տեսակցելու նպատակով: Ամուսնութեւնը, հաճախ, բնականիքից առանձնանալու և գյուղում մնալով սեփական, ինքնուրույն տնտեսութեւն վարելու պատճառ էր դառնում: Սակայն արտադնացիների մեծ մասը (հատկապես Բաքու և այլ մեծ քաղաքներ մեկնածները) գարնանը սովորաբար շտապում էին տուն՝ սկսելու դաշտային աշխատանքները, համեմայն դեպ, բնահանութեւն տնտեսութեւն վարող եղբայրներից որեւէ մեկն անպայման վերադառնում էր: Դեպքեր էին լինում նաեւ, երբ արտադնացիներն ավելի շահավետ էին համարում շրջանի քաղաքային աշխատանքը, իսկ գյուղի դաշտային աշխատանքները կաարել կիսարարային կամ վարձակալական այլ սկզբունքներով աշխատուժ վարձելով: Դժբախտաբար, հաշվառված չէ, թե ով որքան հաճախակի ու երկարատե էր արտադնացութեան մեկնում քաղաքներ, որտեղ ով և ինչպես էր տեղավորվում և որքան էր վաստակում: Դասելով հարցման տվյալներից, քաղաքում մնալը բնահանութեւն ամամբ բավական տեական էր լինում և բնագործութեւն էր առավել երիտասարդ այն տղամարդկանց, որոնք առանձնապես բնակաւունակ էին արտաքին ներգործութեան հանդեպ:

Արտադնաց գյուղացիները քաղաքային սովորութեւններ էին մտցնում դարաբաղյան գյուղ: Փոփոխութեւնն ամենից առաջ արաքին, կենցաղային էր: Արտադնացութեան ամենից ավելի ասարածված շրջաններում՝ Դիզակում և Վարանգայում, մասամբ նաեւ ներքին խաչներում գյուղերն արդեն փոխել էին իրենց պաակերը, հտդուտի, կահ-կարասու մեջ նկատվում էին ոռոտական նորամուծութեւններ, իսկ դվարձանքներում հստակորեն երեւում էր քաղաքային ճաշակը, ավելի ցայտուն դարձնելով հին տղարհրկալման քայքայումը: Ասկայն տնտեսական կյանքում այդ աղղեցութեւնը դրեթե չէր արտահայտվում՝ ո՛չ հացամշակութեւնը, ո՛չ այդեգործութեւնը, ո՛չ անասնապահութեւնը և ո՛չ էլ կաթնատնտեսութեւնը նոր ձեեր չէին յուրացնում: Եվ դա լրիվ հասկանալի է. արտադնացիները քաղաքում բացառապես անդավորվում էին առետրարգյունարեական կամ ղուտ քաղաքային ձեռնարկութեւններում, ուստի և բուրովին չէին հարստացնում իրենց գյուղատնտեսական փորձը:

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՆՈՐ ՏԱՐԻՒ ԱՌԱՋ ԳԱՐ

Շուշու հրդեհից հետո նոր կենցաղի առաջացման համար տեղի քաղաքային տարրի նշանակութեւնը ծայրասահճան նվաղեց: Վարչական նոր կենտրոն Սահփանակերտը (1927 թ. հաղիվ 3 հայտ

զարից ավել բնակչությանը) նոր էր կառուցվում և ունեւր բավական մեծ և մաքուր ավանի տեսք: Բայց այն առաջիկա շուկան իր տնտեսական բաղան, դոնե այնպիսին, ինչպիսին տակավին ունեւր Շուշին: Այդ բազան կստեղծվեր միայն տյն դեպքում, եթե ցածրույթները Ղարաբաղի արոտավայրերին միացնող գլխավոր ուղին Շուշու փոխարեն անցներ Ստեփանակերտով և դեպի վեր՝ Շուշի տանող ղառիվայր խճուղին փոխարինվեր Ստեփանակերտ տանող նոր, բարեկարգ ճանապարհով: Իսկ մինչ այդ, դուրսից ունեցող հաղորդակցության ուղիների և ցածրագիր շրջաններում արտադրողական ուժերի բուռն զարգացման նոր պայմաններում Շուշու փոխարեն (որի բնակչությունը նվազել, 1902 թ. 27 հազարից հասել էր 7 հազարի, ընդ որում՝ հետագա անկման միտումով) սկսեցին երևան դալ առևարարությունները: Նման կենտրոններ են երևան գալիս Ղարաբաղի լեռնաշղթայի ծալրագավառում՝ ցածրույթներ տանող դետահովիտների ելքերում: Դրանցից մի քանիսը գտնվում են լեռնալիս Ղարաբաղի սահմաններում, մյուսները, որոնք ավելի նշանակալից դեր են կատարում՝ այդ սահմաններից դուրս, որոշ դեպքերում՝ մի քանի կմ հեռավորությամբ միտյն: Առաջիններից են Թարթաու և Խաչեն դետերի ավաղանները սահման անցումներով միացնող Օհան-Յաթաղ դետակի՝ Ղարաբաղի ցածրավայրերի ելքին հարող Արտակերտ գյուղը (Ջրաբերդի շրջան) և Հոնաշեն դետի՝ Մուղանի տափաստանի ելքին հարող Հոնաշեն գյուղը՝ Վաթանդայում: Այս երկուսն էլ արդեն շրջանային կենտրոններ էին դարձել: Երկրորդների թվին են պատկանում համանուն դետի տափաստան տանող ելքի մոտ ընկած Թարթաու, բայց հատկապես՝ Աղզամ գյուղերը և վերջապես Թաղլարից արևելք գտնվող Կարյաղինո գյուղը¹⁴: Աղզամն իր կողմն էր վրավում Շուշու ամբողջ առևտրաարդյունաբերական կյանքը, իսկ Կարյաղինոն, որը վաղուց ետին պլան էր սղծվ Ջրաբաղի, համանուն դավառի նախկին կենտրոնը՝ այն շրջանի ամբողջ առևտրաարդյունաբերական կյանքը, որանդ Հաղրութն արդեն կորցրել էր գլխավոր շուկայի իր նշանակությունը: Նէպի տարիներին Աղզամից ու Կարյաղինոյից լեռնաշխարհ էին դուրս բերվում գործվածքեղեն և այլ ապրանքներ, որոնց առևարականներն իշխող էին ոչ միայն լեռնային Ղարաբաղում այս ու այնտեղ որոշակի օբերի (օրինակ, Տողում՝ ուրբաթ օրը) կադմակերպվող շաբաթական տոնավաճառներում, այլ նաև Շուշիում, որտեղ գլխավոր մասնավոր կրպակները պատկանում էին աղ-

դամցիներին: Քաղաքների և քաղաքատիպ բնակավայրերի առաջացման խիստ բնորոշ պրոցեսը ծայրադավառում, այնտեղ, որտեղ լեռնաշխարհը սահմանակցվում է տափաստանին, բնականաբար, բացառվում է հենց լեռների ու գետահովիտների ուղղությամբ, որտեղ հաղորդակցության բնական ճանապարհները հարում են գետերին: Հովիտները դուրացնում են վերից վար և վարից վեր շաբովելը, իսկ դրանց միմյանցից բաժանող լեռնաշղթաներն իրենց շեշտակի լեռնանցներով դժվարացնում են լայնակի հաղորդակցությունը և անցումը մեկ դետահովից մյուսը: Լեռնային Ղարաբաղում առկա հարմարավետ անվտուխներ Ստեփանակերտից՝ Վարանդա, Դիզակ կամ Ջրաբերդ են տանում, սկզբում իջնելով ցած՝ դեպի Աղզամ, իսկ այնուհետև տափաստանների հենց եզրով ու լեռնաշղթայի ստորոտով հարավ՝ դեպի Հոնաշեն կամ Հաղրութ ու Թաղլար (Կարյաղինոյով), իսկ հյուսիս՝ դեպի Մարաղներ: Տափաստանների տնտեսական աշխուժացման և բնակչության առավելապես տնտեսության նստակյաց ձևին անցնելուն զուգընթաց, նոր առևարարություններական կենտրոնները հսկայական ազդեցություն կունենան լեռնային Ղարաբաղի ոչ միայն տնտեսական, այլև կենցաղային կյանքի վրա, և դրանցում ավելի բաղմակողմանի ու խորը կկաարվի երկու՝ լեռնային ու տափաստանային մշակույթների խաչասերումը:

ԲՆԱԿԱԼԱՅԻՆՈՒ ՈՒ ՏՆԵՐԸ

Գյուղերը: Լեռնային Ղարաբաղում բնակավայրի գերակշռող տիպը դուրս է (շեն)¹⁵, Այն սովորաբար փակչած է հովիտների ու կիրճերի բարձրարևը լանջերին, ուղղաձիգ ժայռերի մոտ և հենց լեռների գաղաթների տակ, որոնք մի ժամանակ վտանգի դեպքում բնական ամրություններ են ծառայել: Ցցուն ու դառիթափ այդ ժայռերն այստեղ կրում են քեթ հատուկ անունը: Բացի պաշտպանական նպատակահարմարությունից, այլ հանդամանքներ էլ էին բնակչությանը ստիպում բնակվել հենց ժայռերի տակ, օրինակ՝ քարերի աակից բխող աղբյուրների մերձավորությունը: Տները ցրված են անկանոն զանգվածներով, լուսնն որևէ հատուկ հատակադիծ, բայց կրում են հին աղպառհմային խմբավորումների հետքերը: Մի ժամանակ ամեն մեկն իրեն ղրուշարար պահում էր ազգատոհմային թաղի մոտ, բայց աճած սղգատոհմն արդեն շտեղավորվելով թաղի անձուկ շրջանակներում, աղատ հողամաս էր որոնում մեծ մասամբ

¹⁴ Անվանված է ի պատիվ Կովկասյան պաանաղմի պատմության մեջ հայտնի դուս գնդապետ Պավել Միխայլովի Կարյաղինի: Հետագայում այն վերանվանվեց Ֆիզուլի (ժամոթ. խմբ.):

¹⁵ Լեռնային Ղարաբաղի գյուղերը մեծ մասամբ երկու անուն ունեն՝ հայկական և աղբյուրական: Կովկասի ուղմական շտարի քարտեզներում նախապատվությունը տրված է աղբյուրական անվանումներին:

դյուղի ծայրամասերում, արդեն այնքան էլ հաշվի չառնելով աղագեցական կապերը, բայց, համենայն դեպս, այնքան էլ չէին հեռանում բուն բնակավայրից: Հատկանշական է, որ ունեւոր դուղացիին հազվադեպ էր դյուղի սահմաններից դուրս գալիս և մեկուսանում, նախընտրում էր հիմնավորվելու իր տոհմային թաղում, տան և բակի աստիճաններին ընդարձակելով ի հաշիվ հարեանների, ձգանով նրանց ամեն կերպ հարկադրել զինելու իրենց հողակտորները: Այս վերջին հանգամանքը գյուղացւում էր նրա անմիջական ազդեցութիւնն ազգականների վրա, մյուս կողմից էլ հարուստ այլ ընտանիքների մրցակցութիւնում ապահովում էր ներանց օժանդակութիւնը¹⁶:

Լանջերով վեր մագլցող ծուռումուռ փողոցները հաճախ վերածվում են գրեթե անմշակ քարերով շարված սանդուղքների: Հաճախ մի ասան կրտուրը բակ է ծառայում մյուսին, որը գտնվում է փողոց-ինչ վեր: Ամբողջ աղբը, հաճախ նաեւ թրիքը, փողոց է թափվում, ուր մեկուսի անկյունները ընտանեկան պեղծերը հոգալու վայր են ծառայում: Այդ աղբն ու կեղտը լվացվում, տաքվում էր հորդահոս անձրեւայրերի միջոցով, որոնցից հետո օդը մաքրվում էր գարշահաւութիւնից:

Այժմ գյուղերում հսկողութիւն է սահմանված փողոցներն ու բակերը մաքուր պահելու համար:

ՏՆԵՐԸ: Որպես հնաձեւ առն ամենուր հանդես է գալիս ետին պատով գեանում ներփորված ղաւաղամ-ը՝ «սե տունը»: Սա քարե հիմքերի վրա ապա կանգնած՝ չորս հասա ուղղահայաց սյուների հենված հորիզոնական շարվածքի կաղնե հասա գերաններով շինված ասանիք ունեցող քառակուսի քարե շենք է: Տանիքի գերանները զգվում են հորիզոնական, ամենուր խիստ որոշակի կարգով, աստիճանաբար փոքրացող քառակուսիներով¹⁷ հասնելով առասպաղի նույնպես քառակուսի երգիկին: Միակ դուռը ծածկված պառչգամը է ելնում, ուր ընտանիքն անցկացնում է ամբողջ ամառը: Ե՛վ տունը, ե՛ւ պառչգամը ծածկված են մեկ ընդհան-

նուր հողե կաուրով: Տան նման ախպր աստիճան էր նույնիսկ մեղիքական պալատներում՝ ճամբարներում: Սենյակի մեջանը՝ երդիկի աակ (որը նաեւ որպես ծանելույզ էր ծառայում) կրակի մրից սեացած հիշյուլ կառուցները նաշնում, Վարանգայում և Դիզակում արգեն լքվում են կամ էլ ընտանեկան են ծառայում աղքատների ու որրացած ընտանիքների համար միայն: Դրանք հաճախ օգտագործվում են որպես շանարան, գոմ կամ անասնական այլ նպատակներով, բայց շատ գեպքերում ուղղակի քանդվում են, որպեսզի իրենց անղը դիշեն նոր, կողային պատերին լուսամուտներ ունեցող երկթե կաուրով վերգեանյա կառուցներին:

Ղարաղամներն առավելապես պահպանվել են հյուսիսային շրջաններում, հաակապես հեռավոր Հաթերք գավառում, որի Վաղուհաս գյուղում բոլոր աներն այդ ախպի գեանափորներ են: Նոր՝ հաճախ երկհարկ աները մեկ կողմից ունեն նաեւ ընգարձակ պատշգամբ: Սաորին հարկը սովորաբար տնտեսական նպատակներ է ծառայում, իսկ վերինը ընակելի է: Ըստ որում, ամռանը ընակելիները գերազասում են ապրել սաորին հարկում, որտեղ ավելի դով է: Տանիքները ծածկված են այստեղ նախընտրելի կարմիր ներկված թիթեղով կամ էլ հարթ կղմինդներով (այն վայրերում, ուր գարգացած է կղմինգրի արաաղրութիւնը): Մարագը, գոմը և տնտեսական այլ կառուցներ շինվում էին քիչ հեռու և ծածկվում ծղոտով կամ եգեգով: Բակերը ղեռ փոքր էին և անցանկապատ ու հաճախ ծառայում էին հարեանների ընդհանուր օգտագործմանը: Որոշ անղերում, հաակապես այնտեղ, ուր աներն ամռանը հովեկ եկած ղարարաղցի էր, աներին կից այգիներ էին տնկված: Սակայն ամենուր զգացվում էր արձակ տարածք ելնելու ձգտումը, և որոշ ընակիչներ տներ էին կառուցում գյուղի սահմաններից դուրս, առավել ընդարձակ տեղամասերում, տները շրջապատելով համեմատաբար մեծ այգիներով:

Ագարակներ: Անտառների հաշվին ցանքաասարածքի ընգարձակման և վարելահողերը ընտկավայրերից հեռացնելու հեա միասին առաջացավ ընտկավայրի նոր տիպ: Գյուղացիներն իրենց աշխատաժամտնակի մեծ մասն անց էին կացնում անից հեռու, գաշտում և այգ է պառճաոր, որ այնտեղ կալ էր սարքվում ու ժամանակավոր ընտկատեղեր էին կառուցվում, որոնք հեաագայում մշականի էին վերածվում, քանի որ հեռավորութիւնը գժվարութիւններ էր ստեղծում մթերք գաշա ուղարկելիս և հոգնեցուցիչ էր անասուններին գյուղ քշելը: Սյսպես, ագարակներ առաջացան Գյունեճարաար, Սոս, Թաղավարգ հին գյուղերի մոտ: Դրանցից շատերը գեռ չունեն իրենց հաաուկ ք-

¹⁶ Խորհրդային իշխանութիւն հաստատումից և հատկապես կոլեկտիվ տնտեսավարման հաղթանակից հետո, կոլտնտեսութիւն անղամները արաղ թափով ձեռնամուխ լինելով կառուցապատմանը, նոր տները շինում են հին դյուղի հին տարածքից դուրս:

¹⁷ Տե՛ս իմ «К изучению армянских крестьянских жилищ (Карабахский карадам)» հոդվածը, գետեղված «Известия Кавказского археологического института» պարբերականի III հատորում (Թիֆլիս, 1925):

Այս տիպի տունը հայ ժողովրդական տան՝ զլխատան մի տարբերակն է, որը ղարարաղցիները կոչում են նաեւ կըրկոն, որպիսի անվանումն ավելի հին է, քան ղարագամը (ծանոթ. խմբ.):

նունենը և հայտնի են կալեք ընդհանուր անվամբ: Սովորաբար կալերը գտնվում են նախնական րնակավայրերից զգալիորեն ներքև, առավել ընդարձակ վայրերում, հաճախ թթի տնկտրանների ու այգիների մոտ: Ագարակներ գոյանում էին նաև քամիններից պաշտպանված այն վայրերում, ուր շինված գոմերում (կճւմ) վաղուց ի վեր նույնպես ձմռանն անասուն էր պահվում: Այսպես, Վաղուհասից անջատվեց Հարությունակոնները, Առաջածորից՝ Պողոսակոններն ու Վերսրկոնները: Համայնքային հողից համապատասխան հողարածին հատկացնելու միջոցով հին գյուղերի կազմից նոր գյուղակների անջատման սլրոցներ հատկապես ցայտուն է արահայտված Հորաթաղի գավառակում, ուր Կուսապատ (Կասապետ) գյուղից անջատվել են Դամրլուն, Հորաթաղը և Մարտակերտը, գուրս մղելով իրենց մայր շենին, կամ Կալաղարասու գավառակում, ուր Կալազարասուից անջատվել են նոր Կալազարասին, Խրիանը, Կորաղերքը, Կանաչթալան և Զորան-Գոնեն:

Դեռ մելիքների օրոք կիրառվում էր չափից ավելի րաղմանգամ րնտանիքներին գոմերում վերաբնակեցնելու: Այսպես, Ավետարանոց (Չանախչի) գյուղից անջատվեցին Ալամանց-կոնները, Մրբամանց-կոնները, Պլկանանց-կոնները և Հասանանց-կոնները, որոնցից մի քանիսն այժմ էլ կան¹⁸: Ագարակները շատ գեպքերում կրում են կամ տոհմային, կամ էլ րնաանիքների գլխավորներին անուններ:

Տեղանունների առաջացումը տարվելու համար նյութ կարող է ծառայել թաղ արմատի հաճախակի կրկնությունը գյուղերի անվանումներում¹⁹:

ՏԱՆ ԿԱԼԱՎԱՐՈՒՄԸ

Տան կառավարումը: Քառասուն ասրի առաջ Հագրութի ուսումնարանի ուսուցիչ Դավիթբեկովը տվել է դարագամի ներքին կահավորման պատկերավոր նկարագիրը: «Ղարադամ մտնելիս առաջին հերթին աչքի է ընկնում օջախը, ուր կրակ է բոցկրլտում և որի շուրջը, սովորաբար, գորգերին կամ կարպետներին ծալապալակ նստում են ընտանիքի րոլոր անդամները: Հայրը, որպես ընտանիքի սովադագույն անգամ և ասն գլխավոր, պատվավոր տեղ է պրավում հենց օջախի մոտ: Տնարար տանտիկնոջ րնակարանի անկյուններից մեկում անդավորված են թթու կամ աղ գրած բանջարեղենով լի ասրեր չափի պուլիկներ: Այստեղ կարելի է գտնել

կաղամբ, բոխի, վարունգ. լոլիկ. պղպեղ և այլն: Մի այլ անկյունում է գտնվում պռոզ կոշվող կլոր և ապակ թարմ թիվսած հացերով լի փայտե տաշար: Երրորդ անկյունում գտնվում են ուխարի բրդից գործված պարկերը կամ, ինչպես այստեղ կոչվում են՝ օվալ-ները. լի ալյուրով և հացահատիկներով: Զորորոշ անկյունում հավանոցն է, վերևը կախված են երկրագործական գործիքները. մորթած կամ տարրեր հիվանդություններից սատկած ընտանի կենգանիների մորթիների ու կաշիների կտորները: Պատերից մեկի դիմաց, գրա երկայնքով, փայտե թախտ է սարքված, որն ունի մեկ արշին բարձրություն և 10 արշին երկարություն, որի վրա դարսվում են անկողինն ու այլ տնային իրեր. իսկ տակը պահվում է ամանեղենը: Մյուս պատին հենած ղըված են օղիով լի կարասները: Պատերից կախկախված են չորացած րանջարեղեն, պարաններ, րնկույղով և այլ չոր մրգերով լի փոքրիկ պարկեր: Բնակարանը լուսավորվում է սե նավթի մեկ կավե կանթեղով, որի պատրույգը պատրաստվում է հին, մաշված բամբակե գործվածքների մնացորդներից: Ամեն տեսակի տաք ու տեստները կանայք են պատրաստում կրականոցում, իսկ հացը, շաքարը երկու անգամ, թխում են թոնրի մեջ²⁰:

Ներկայիս նոր սովորություններն²¹ ու տեխնիկական հարմարությունները րացարձակապես կերպարանափոխել են այդ պատկերը: Ղարադամ են թափանցել ճենապակե ափսեններն ու արծնաղօծ գավաթները, ղանակներն ու պատառքաղները և վիեննական ճկաթոռը, սակայն հին կահավորումը դերակշռում է: Այն չկա նոր տներում: Աննյակները տաքացվում են րուխարիկներով կամ թիթեղե վառարաններով, շատ դյուղերում կարկի է տեսնել եթե ոչ երկաթե մահճակալներ, ապա լայն փայտե թախտեր, աթոռակներ, նստարաններ ու աթոռներ, սեղաններ, կոմոգներ, պահարաններ, մի խոսքով՝ ամեն տեսակի քաղաքային կահույք: Պատերին կախված են Անգրկովկասի ու Ռուսաստանի քաղաքներում ցրված հեռու և մոտ աղգականների լուսանկարների մի ամրոջ հավաքածու, ինչպես նաև գրողների, կոմունիստական կուսակցության առաջնորդների դիմանկարներ, ամեն տեսակի պատկերապարզ պլակատներ, նաև՝ կեղտոտ ջրջանակներով գռհհկաճաջակ նկարներ: Անկյուններից մեկում վեր է խոյանում ներքնակների, րարձերի և վերմակների գորգածածկ կուտակը: Դեռ հեշտ չի արմատավորվում պատրաստի անկողին ունենալու սովորությունը, այն ամեն գիշեր գցվում է, րնղ

¹⁸ Կ. Կ. Միլիք-Շահնազարյանի ցուցմունքը (Ավետարանոց գյուղում):

¹⁹ Թաղասեռ, Թաղուտ, Թաղար, Ճանկաթաղ, Հոռաթաղ, Գյուլաթաղ, Մոխրաթաղ, Վարեկաթաղ և այլն:

²⁰ И. Давидбеков, Галрут, СМОМПК, т. VI, էջ 181.

²¹ Հեղինակը նկատի ունի 1924 թ. և դրանից հետո (ծանոթ. խմբ.):

որում, դեպքումս ի՞նչ հատուկին հատերից մեկը
և բոլոր թախտերը դորգերով են ծածկվում, որոնք
մեծ մասամբ տնայնագործական են, և, ընդհան-
րապես, ամեն ինչից երևում է, որ կահավորման
տմենադնահաանի մասը կրկին կաշմում են գոր-
ղերն ու անկողիները:

Ամանեղենը: Խոհանոցային ամանեղենը մեծ
մասամբ հասա սղնձից է, դերակշուում են կոնաձե
կաթսաները, երկար ընկած խոր թավաները,
ակաղական ձե ունեցող ծանր քամիչները, որոնք
Անդրկովկասի հայ ընկալության մեջ ամենուր շատ
աարածված են:

Ուտեստը: Ուտեստի մեջ նույնպես առաջնա-
կարգ անդ են գրավում բանջարեղենով (լոբի, սի-
սեռ), դաջալին ու անամբձում աճեցրած խոտե-
րով պատրաստված հին ճաշաեսականները, ինչպես
նաև փլավը, ձվածեղը, կոլոլակը կամ ծեծած մսի
Բյուֆթան, խաղողի, կաղամբի և բաղուկի տերե-
ներով փաթաթած աղման, Կաղամբը Լեոնային
Ղարարաղում վաղուց է կլիմայավարժվել: Համե-
մաաարար վերջերս է հայտնվել կարտոֆիլը, իսկ
ջաա ավելի ուշ՝ լոլիկը, որի օգաագործումը, սա-
կայն, հաակապես հարավային շրջաններում գրեթե
համաաարած է դարձել: Հսկայական քանակու-
թյամբ սոխ ու շաղգամ է սաացվում: Ենձ ոչ մի
տեղ ըախո չվիճակվեց սմրուկ տեսնել: Գյուղե-
րում միս դժվար է ճարվում: Այն նախկինում առատ
էր լինում մատաղի օրերին (ոչխարի միս), իսկ որ-
պես կերտկուր օգտագործվում է եփած, խաշած
կամ խորոված վիճակում: Միսը ընդունված է նաև
տապակել յուղով: Շաա են հավերը, իսկ ստգեր ու
րաղեր իսպառ չկան:

Խմորեղենի մեջ րացակայում է ոռուսական
կարկանգակը: Հյուրասիրում են կաթնահունց (ա-
ոանց խորիղի կամ քաղցր ալրախորիզով), գաթա
և րարակ քաղցր ըլթներ:

Նախկինում գերակշուում էր կաթնեղեն ոնուն-
գը, րայց մեր շրջագայության ժամանակ, անաս-
նաղահոթյան խիստ կրճաաման հետետնքով, ար-
գեն ամենուր դգացվում էր պանրի, կարտգի, մած-
նի պակասը: Կովերի փոխարեն շաաերը միտյն
այժ էին պահում:

Լեոնային Ղարարաղում հացն այնպես չի թրխ-
վում, ինչպես Հայաստանի անտառաղուրկ շրջան-
ներում: Մի քանի ամսվա համար թիվող րարակ
ու երկար լավաշների փոխարեն այսանդ թիվում
են ավելի հաստ ու կլոր հացեր՝ սլոգ-ներ, երկու-
երեք օրը մի անգամ (շնորհիվ փայտի առաաու-
թյան): Լավաշ սովորաարար թիվում է մաաաղի ժա-
մանակ, քանի որ նրանով հեշտ է եփած միս փա-
թաթելը և աղքաաներին ու հարեաններին ուղար-
կելը:

Արտաքինը: Խոսելով դարաբաղցի հայի ար-
տաքինի մասին, ստիպված ենք հիմնվել ոչ թե ձը-
գրրիտ մարդաշահական տվյալների, այլ գիտում-
ներով ստուգված անձնական տպավորությունների
վրա:

Ղարաբաղցի հայի կերպարը նշանակալիորեն
տարբերվում է սաորին չորային շրջանների, հատ-
կապես՝ մերձարաքսյան, Հարթի, Մշո շրջանների
հայերի կերպարից: Այստեղ գերակշուում են րաբձր
հասակը, համեմատաարար ավելի սպիտակ մաշկն²²
ու րաց գույնի մտղերը (մուգ սևից մինչև մուգ շի-
կահեր), րավական հաճախ են հանգիպում րաց
գույնի աչքեր: Խարայաշ մազեր ու երկնագույն աչ-
քեր առանձնապես հաճախ են հանգիպում մի այն-
պիսի մեկուսացած անկյունում, ինչպիսին է Հոնա-
շեն գետի ակունքների մոա, Բողիխանի գանգվա-
ծի լանջերի տակ գանվող ննգի գյուղը, որտեղ կա-
րող էին պահպանվել նաև մերձկասպյան աափաս-
աաններից ելած էթնիկ ալիքի ֆիզիկական առանձ-
նահաակությունները: Ղարաբաղցի կինն էլ, աղա-
մարդն էլ կանգնում են ուղիղ, ուղղահայաց ձգված
մեջքով: Կորացածությունն ու ղուրս ցցված փորը
խիսա հաղվագյուա երեույթներ են: Նույնիսկ ծե-
րունիներն ու պառավները ուղիղ են քայլում, ա-
ոանց կռանալու: Ջրով լի մեծ սափորի ծանրությու-
նըն էլ չի խանգարում, որպեսգի աղբիկը վայելչա-
կազմ ու լարի պես ձգված րարձրանա լեոնային
արահաով: Այս սովորությունն արմատացել է սա-
րերի լանջերով անընգհատ րարձրանալու ու իջնե-
լու, քարից քար թոչելու և ձիավարության շնոր-
հիվ: Լեոնային Ղարարաղում մինչև այժմ էլ փո-
խագրամիջոց են ծառայում ձին կամ ջորին²³: Ղա-
րարաղցու շարժումներն արագ են ու վճռական,
քայլվածքը՝ թեթև ու արագ, խոսքն արագ է, հա-
մեմաաած սարահարթային (մերձարաքսյան, էրզ-
րումի, Ալաշկերտի և այլն) հայերի խոսքի հետ:

Սանրվածքը: Հնում ընգունված էր աղամարգ-
կանց գլուխը սափրել՝ գագաթին թողնելով քաֆուլ,
իսկ երեխաների մաղերը կարճ էին կտրում՝ ճտկա-
տի մեշտեղը թողնելով թել: Այս սովորությունը
վաղուց է վերացել, իսկ կանանց սանրվածքն ավե-
լի պահպանողական է: Աղջիկները մինչև հիմա էլ
չորս հյուս են անում, որոնցից երկուսը ետ են գը-
ցում՝ մեջքին, իսկ երկուսը՝ կրծքին: Այսպիսի սա-
նրվածք ունեն նաև ամուսնացած կանայք, միայն

²² Այն գյուղերում, որոնց տգամարդիկ ցածրավայր են
իջնում արտաղնաց դաշտային աշխատանքների, հաճախ է
հանգիպում դղերոցքոտ դեմքի գեղնավուն նրբերանգը:

²³ Արարատյան դաշտի և Երեանի համար այնքան րը-
նորող դիրակազմության ու յուղափայլ երեսների տոկոսն
այստեղ խիստ աննշան է:

այս դեպքում գլխաշորի փոխարեն շատ րարդ պա-
ճառանք է պահանջվում, որի տակից պետք է երե-
վան միայն առջևի հյուսերի ծայրերը:

Հագուստը: Լեռնային Ղարաբաղը պետք է դո-
սել այն մանածագործական մարդերի կարգը, որը
կարելի է կոչել բրդի, ի տարբերություն վաշի մար-
դի, որտեղ տեղական ավանգույթով վաղագույն գա-
րեթից ի վեր գործվածքները վաշի թելից են գործ-
վում: Հնում՝ Ղարաբաղում ինչպես տղամարդու,
այնպես էլ կանացի հագուստների կտորները գործ-
վում էին բրդից, իսկ վաղը մինչև այժմ էլ մշակ-
վում է յուղ, այլ ոչ թե թե ստանալու նպատակով:
Մինչև այժմ էլ պարանները բրդից են հյուս-
վում և կոշվում են չվաճ, իսկ հացահատիկի
բրդի պարկերը՝ ջվալ ու խաւաւ: Բրդից են
նաև կարպատները, գորգերը, մափաւաշ-ները
(ճամփորգական պարկերը), խուրջիները, գուլ-
պանները, շալերը, հագուստն ու սփռոցները²⁴։
Բամբակե գործվածքներն ուլ են հանգես եկել, իսկ
ավելի ուշ՝ մեծաքսը: Բամբակն աստիճանաբար
դուրս է մղում բրդին, ինչ վերաբերում է մետաք-
սին, ապա, չնայած տեղում շերամապահության
արգյունարերական նշանակությանը, գյուղացիու-
թյունը, այնուամենայնիվ, այն այնքան էլ հոծա-
րակամ չի օգաագործում գործվածքներում, քանի
որ անդի շուկակային տեխնիկան մետաքսե նուրբ
գործվածքներ չի աալիս: Մետաքսից մեծ մասամբ
բարձի երես, վերմակի ու ներքնակի ծածկոց, ջե-
ջիմ կամ շապիկի ալլըլլը (կարմիր կտոր) են
անում, իսկ ամենից հաճախ մետաքսի թելերը
պահվում են տարբեր հագուստների կարելու հա-
մար: Բամբակը ձեռք է բերվում ցածրավայրերի
բնակիչներից, իսկ բուրգը՝ սար բարձրացող անաս-
նապահներից: Սեփական անասնապահությամբ
անկմանը գուզընթաց, դարաբաղցին տվելի ու ա-
վելի սուր է դգում բրդի պակասը:

Քաղաքային մշակույթի աղբեցությունը բնակ-
չությունը հետզհետե հրաժարվում է հնաձև հա-
գուստներից: Ավելի ջուտ սկսեց նահանջել տղա-
մարդու, տվելի ուլ՝ նաև կանանց տեղական տա-
րագը: Առաջներում աղամարդիկ ալխալույ էին
հագնում, իսկ վրայից՝ շալա, քուղերով (խոնջտն)
կապվող տաբատ, որը նաև ետ ու առաջ կարելի էր
հագնել: Ութերին թելակապ կարճ կոշիկա ու կի-
սամշակ կաշվե տրեկս էին հագնում: Գլխին գնում
էին ուլսարի մորթուց պատրաստված լայն կոնաձև
փափախ: Ձմռանը հագնում էին երկար, գարձյալ
ոլխարենի մուշտակ՝ քալք: Այժմ նակաձը (յափըն-

ջին) մուտք է գործել վերջերս՝ Դաղստանից: Տընի-
ների փոխարեն ծերունիները գերադասում էին ծա-
լը ծածկված ու վեր թեքված և ետևը բաց կրկա-
վոր կիսակոշիկներ՝ քաշե հագնել: Նորամուծու-
թյան ամենից ավելի ենթարկվել են գլխանոցն
ու ոտնամանը, փափախին փոխարինել է փոքր հո-
վարով կոթ գլխարկը, իսկ քոշերին՝ երբեմն շա-
րարձր ձեռքեր ունեցող երկարաճիտ կոշիկները:
Տընիները մինչև այժմ էլ պահպանվում են, սա-
կայն հիմա էլ գյուղերում ինչպես տղամարդիկ,
այնպես էլ կանայք ունեն բոկոտն քայլելու
սովորություն: Տեղական շիլաւ սկզբում փո-
խաբինվեց լեռնավիրական շուխայով, իսկ այնուհե-
տե, ուղղակի ալխալուղի վրայից նեղ, կոճակներով
կոճկվող տաբատի հետ հագնվող պիջակով, և
վերջ ի վերջո, այս ու այնտեղ արխալուգի փոխա-
րեն երևան եկավ բաճկոնը: Այս կերպարանափո-
խությունն ավելի արագ տեղի ունեցավ նրանց հետ,
ովքեր մեծ քաղաքում ծառայել էին որպես զոնա-
պան, գրասենյակի պահակ կամ խանութի գործա-
կատար ու գործարանի բանվոր, իսկ ավելի դան-
գաղ՝ այն անձանց, ովքեր շինարարությունում
էին աշխատել: Որպես վերջին տարիների երևույթ,
պետք է նշել, որ երիտասարդներից նրանք, ովքեր
առանձնապես ուզում էին ցուցադրել իրենց կորո-
վությունը, սկսեցին ցածր՝ 10—12 սմ-անոց ու-
ղիղ փափախներ գնել՝ կարված ուլսարի շիկավուն
մորթուց, գագաթամասը՝ մուգ գույնի կտորից:

Կանացի գլխանոցի մի վիճակից մյուսին անց-
նելու պրոցեսն այլ կերպ է ընթացել: Հին
զգեստը կաղմված էր գրեթե մինչև կրունկները
հասնող թեքավոր երկար ներքնաշապիկից, որը կար-
վում էր մուգ ու կարմիր մետաքսե կամ բամբակե
կտորից և հագնվում մերկ մարմնին, նույնպես
կարմիր գույն ունեցող ու խոնջալու՝ ամրացվող
վարտիքի վրա (որը ևս ետ ու առաջ կարելի էր
հագնել): Շապիկի վրայից հագնվում էր մետաքսե
կամ բամբակաթավաշե, կաղբերին երկար բացվածք-
ներ ունեցող (որոնց պատճառով ծնկներից պզա-
լիորեն ցած փեշերը կրեք քղանցք ունեն) բաց
կրծքով արխալուղը: Արխալուղը գոտևորվում էր
լայն ու երկար (2,5—4 մ) մետաքսե լայն գոտիով:
Տոն օրերին նաև մուշաակ՝ քալք էին հագնում,
որը սովորաբար վառ կարմիր գույնի թավաշից էր
լինում: Քուլքի կրծքի վրա լայն բացվող օձիքը,
ինչպես նաև առջևի բացվածքը՝ վերից վար, ու քը-
ղանցքի ծայրերը եզերված էին լինում կղաքիսի
կամ վայրի կատվի մորթու նեղ շերտով: Կուրծքն
ու թեքերը գարդարվում էին կոճակներով ու ամեն
տեսակի գնդիկներով: Գլխի ծածկոցն ուղղակի ճրն-

²⁴ Զուլհալագործության մասին տե՛ս Промысловые
занятия в некоторых населенных пунктах Закавказья,
А. Елсаветпольская губ., СМОМПК, պր. XI, էջ 113—
—114.

²⁵ Մամձոր գյուղի ծերունիների ցուցումները:

շում էր իր ժանրությամբ և ռարզությամբ։ Այն ռազմաթիվ գլխաշորերով գլխին ամրացված կարճ ու կանդուն մի օղադոա էր, իսկ գլխաշորերից մեկը ծածկում էր երեսի ներքեի մասը մինչև քիթը և լրացնում քառանկյան շրջանակը, որտեղ երեսում էին կողքերից պինգ ձգված հյուսերի մի մասը, աչքերն ու ճակատի կեսը և քիթն ու այսերը շակատին օղադոտից ոսկե կամ ոսկեջրած դրամներ էին կախված։ Գլխի այս ծածկոցն տմեն օր հանել-դնելը յժմար էր, ուստի այն մի քանի օր էլ հանվում (նույնիսկ դիշերը)։ Տնից դուրս դալիս սե ջալ էր դցվում գլխին, իսկ ոտքերին՝ նախաձոր գուլպաներ և շմռկ-ներ կամ քոշ-եր (կանայք տրեխի լէին հաղնում)։

Նոր կյանքը կանանց սովորեցրեց գունավոր շապկի աակից հագնել ներքնաշապիկ, իսկ գունավոր վարտիքը փոխարինել սպիտակով։ Չմուշկները (քոշերը) փոխարինվեցին եվրոպական կրնկավոր ճաքակոշիկներով, ռայց գլխանոցն ու դրա հետ նաե ամրոջ ղգեստը համաոորեն պահպանվում էին, փոխելով միայն կտորներն ու գույները, շնայած, այնուամենայնիվ, գերադասելի էր մնում կարմիր գույնը։ Ղարարաղցի կանացի ղգեստի ռոլոր մասերը ոճական աեսակետից սերտորեն կապված էին միմյանց, և ամենից առաջ՝ գլխանոցի

հետ։ Իժվար էր համարձակվել հանելու գլխի կապերն ու ծամկալները, ահատելու կղակն ու երեսալու մարդկանց՝ դեմքի ամրոջ գեղեցկությամբ։ Դա էլ համապատասխանում համեստության ու ամոթիւածության հասկացություններին։ Առաջին և ամենահամարձակ քայլը քաղաքներում (և այն էլ առաջինը լեոնային Ղարարաղում) այն էր, որ տեղի գլխանոցը փոխարինվեց վրացնակ-ով²⁶, իսկ այնուհետե՝ արգեն եվրոպական ռոլորագլխարկով։ Իսկ դյուղերում կտնայք, նաե ամուսնանալուց հետո, շարունակում էին օրիորդների նման հագնել նեղ գոտիով, դոտկատեղում քիչ ձգված աղատ շոր, իսկ գլխին դցում էին դոնավոր գլխաշոր, միայն այն տարրերությամբ, որ գլխաշորն այնպես էր կապվում, որ ծածկեր երեսի ներքեի մասը՝ ռերանն ու վերին շրթունքը, հյուսերն առաա ընկած էին լինում կրծքին ու մեջքին։ Նույնիսկ գյուղերում այժմ հաղվաղեպ են հին աարաղը կրում, եթե հագնում էլ են, ապա միայն պառավներն ու հիսունն անց կանայք։ Ավելի երիաասարդներն արգեն աղատվել են ղրանցից։

²⁶ Փաստորեն, այսպես կոչված, վրացական գլխանոցն ու թիֆլիսյան կանանց ամրոջ ղգեստը 1828 թ. հայերին Անդրկովկաս վերարակեցնելիս հայուհիներն են ռերել Պարսկաստանից (ծանոթ. խմբ.)։